ԸՆԴՀԻՄԱԽՈՍԱԿԱՆ

ՀԵՆՐԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 387-630-ԱԿԱՆ ԹԹ.» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Հրապարակային պաշտպանության է ներկայացված մի հետաքրքիր և ուշագրավ ատենախոսություն, որը նվիրված է IV դ. վերջին քառորդից մինչև 630-ական թթ. Հայաստանի վարչական կառուցվածքին, իրավական կարգավիճակին ու նախարարական համակարգին: Ուսումնասիրության նյութ դարձնելով Հայոց պատմության համար խիստ կարևոր և մշտապես արդիական այդ խնդիրները՝ Հենրիկ Խաչատրյանը հիրավի քաջություն է հանդես բերել երկու առումով. ա/ քննության առնված հարցերի հետազոտությունը խաթարվում է մեզ հասած աղբյուրագիտական նյութի կցկտուր լինելու պատճառով, բ/ երիտասարդ գիտնականի համար անչափ դժվար է նոր խոսք ասելը այնպիսի հիմնախնդիրների վերաբերյալ, որոնց հետազոտական բավիղը բացել և դրանում իրենց ծանրակշիռ խոսքն են ասել հայագիտության երևելիներ Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը և այլք: Սակայն նշենք, որ ատենախոսը պատվով է կատարել իր հանձնառությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, վերջաբանից, օգտագործած սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից (ընդամենը 148 էջ): Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը և ժամանակագրական սահմանները, գիտական նորույթը, ինչպես նաև, վերլուծել ու արժևորել է օգտագործած սկզբնաղբյուրներն ու գիտական գրականությունը:

Աշխատության առաջին գլուխ, որը կրում է «**Հայաստանի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը (387-630-ական թթ)**» խորագիրը, բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջինում, որը վերնագրված է «**Մեծ Հայքի արևելյան հատվածի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը**» հեղինակը նախ ներկայացրել է Մեծ Հայքի 387 թ. պարսկա-հռոմեական բաժանման սահմանագիծը, ապա Արշակունիների Արևելահայկական թագավորության վերաձևված տարածքը, որտեղ և 428 թ. թագավորական իշխանության վերացումից հետո վերջնականապես հաստատվեց մանզպանական վարչաձև:

Հեղինակը աղբյուրագիտական լայն հենքով պարզաբանել է V դ. Հայկական մարզպանության վարչատարաքային փոփոխությունները, Խոսրով Անուշիրվանի վարչառազմական վերափոխության արդյունքում Հայկական մարզպանության իրավական կարգավիճակի նվազեցումը, VI դ. վերջերին Մարզպանական Հայաստանի

տարածքում երեք վարչամիավորների՝ Տանուտիրական գնդի, Վասպուրական գնդի և Սյունիքի երևան գալու հանգամանքները, 591 թ. պարսկա-բյուզանդական պայմանագրի արդյունքում Հայկական մարզպանության սահմանային և վարչական նոր փոփոխությունները: Աշխատության այս բաժնում ուշագրավ են նաև հեղինակի կողմից ժամանակագրական բնույթի դիտարկումներն ու Մարզպանության դարաշրջանին վերաբերող վերակացու, մարզպան, Առանշահիկ, տանուտեր, Տանուտիրական Հայաստան հասկացությունների նորովի է մեկնաբանությունները:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «**Մեծ Հայքի արևմտյան հատվածի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը**»: Այստեղ հեղինակը ներկայացրել է 387 թ. Մեծ Հայքի արևմտյան հատվածում ստեղծված վարչաքաղաքական միավորների՝ Մեծ կամ Ներքին Հայքի և Սատրապական Հայաստանի տարածքը, տեղական նախարարական համակարգը, կառավարման առանձնահատկությունները:

Հեղինակը աղբյուրների համակողմանի քննությամբ եզրակացնում է, որ Մեծ Հայքի արևմտյան հատվածում (Բարձր Հայք և Ծոփք նահանգներ և Աղձնիքի Անգեղտուն և Ֆարկին գավառներ) Զենոն, և հատկապես Հուստինիանոս I-ին կայսրերի իրականացրած վարչական, ռազմական և սոցիալական քաղաքականության արդյունքում տեղական հայկական նախարարական համակարգը քայքայվել է, իսկ 591 թ. պարսկա-բյուզանդական պայմանագրով կայսրությանն անցած հայկական երկրամասերում այդ գործընթացը մնացել է անկատար արտաքին գործոնների՝ նախ պարսկա-բյուզանդական պատերազմի, ապա արաբական նվաճումների ազդեցությամբ: Հեղինակը դրանցով է պայմանավորում նախ 628 թ. Հայաստանի երկու հատվածներին ինքնավարության շնորհումը, ապա և Թեոդորոս Ռշտունու կողմից նրանց մեկ իշխանապետության մեջ միավորումը:

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է «**Հայաստանի նախարարական համակարգը (387-630-ական թթ.)**» խորագիրը և բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջինում, որը վերնագրված է «**Նախարարական համակարգի էությունը**», հեղինակը քննության է ենթարկել հայկական նախարարական համակարգը, և անդրադարձել նրա էությունն արտահայտող այնպիսի եզրույթների պարզաբանման վրա, ինչպիսիք են նախարար, իշխան, տանուտեր, գահերեց և գահակալ իշխան, ավագ և կրտսեր նախարար և այլն:

«**Նախարարների հողատիրական իրավունքներն ու տիրույթները**» վերնագրով երկրորդ ենթագլխում հեղինակն անդրադարձել է քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում գոյություն ունեցած հողատիրության ձևերին, նախարարությունների քանակական կազմին և Մարզպանական Հայաստանի առավել նշանակալից նախարարությունների պաշտոնական և հողատիրական նկարագրերին:

«**Մարզպանական Հայաստանի կառավարման համակարգը**» խորագրով երրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացրել է Մարզպանական Հայաստանի կառավարման

համակարգում V-VII դդ. կատարված փոփոխությունները: Նշվել են կառավարման հիմնական օղակները՝ մարզպանություն, հազարապետություն, սպարապետություն, մրդպետություն, մաղխազություն, մեծ դատավարություն: Պարզաբանվել է նաև Հայոց իշխան պաշտոնի երևան գալու հանգամանքները և նրա իրավասությունները և դերակատարությունը VII դ. 30-ական թթ. Հայոց իշխանապետության ստեղծման գործում:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում (էջ 127-130) հեղինակը բյուրեղացված ձևով տվել է իր հիմնական եզրակացություններն ու եզրահանգումները, իսկ «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ»-ում ներկայացրել է իր օգտագործած աղբյուրներն ու գիտական ուսումնասիրությունները:

Աշխատությունը շարադրված է աղբյուրների լայն ընդգրկմամբ, նյութի խոր իմացությամբ, իսկ հեղինակի եզրակացությունները ընդհանուր առմամբ հիմնավոր են և համապատասխանում են ատենախոսության նպատակներին: Չնայած համաձայն չենք աշխատության մեջ ներկայացված մի շարք դրույթների ու կարծիքների հետ, հարկ ենք համարում նշել, որ հեղինակը քննությունը կատարել է փորձված հետազոտողի հետևողականությամբ և հարցերը նորովի քննելու անուրանալի շնորհով: Ստորև մենք հիմնականում կանդրադառնանք այս արժեքավոր աշխատանքի մեջ նկատված որոշ անհարթությունների, վիճահարույց խնդիրների, որոնք մեծամասամբ պայմանավորված են աղբյուրների սղությամբ և ոչ մի կերպ չեն նվաստացնում ատենախոսության արժեքը:

1. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը անդրադարձ կատարեր Մեծ Հայքի 387 թ. պարսկա-հռոմեական բաժանման պայմանագրի պատմաքաղաքական և իրավական հիմքերին: Հեղինակը 387 թ. բաժանումը պայմանավորում է Արշակ III-ի և Խոսրով Վերջինի միջև թագավորության բաժանումով: Սակայն ատենախոսը անուշադրության է մատնում այն իրողությունը, որ 385 թ. թագավորության տրոհումը երկու մասի ավելի վաղ՝ 377 թ. կնքված պարսկա-հռոմեական պայմանագրի արդյունք էր (Ammianus, XXXI), և 387 թ. կողմերը ընդամենը վավերացրին այն: Արդյունքում՝ հեղինակը այդպես էլ չի հստակեցրել Մեծ Հայքի երկու հատվածներում խոսքը Հռոմի և Պարսկաստանի գերիշխանության, թե տիրապետության մասին է: Այն, որ երկուսի իրավունքը բխելով միևնույն պայմանագրից, եղել է նույնական, կասկածի ենթակա չէ: Հեղինակը, ըստ էության, ճանաչում է Մեծ Հայքի արևմտյան մասի նկատմամբ հռոմեական (բյուզանդական) կայսրերի տիրապետության իրավունքն ու վարչական վերաձևությունների օրինականությունը: Սակայն Մեծ Հայքի արևելյան մասի նկատմամբ պարսից արքաների իրավունքի վերաբերյալ հեղինակի պատկերացումները հստակ չեն: Ատենախոսը գրում է, թե ***«Նախարարները պարտավոր էին պարսից արքային որպես գերակայի հարկ վճարել և զինվորականծառայություն կատարել: Վերջինս էլ իր հերթին պետք է անխախտ պահեր նախարարների ժառանգական հողատիրական իրավունքներն ու արտոնությունները և ճանաչեր Հայոց եկեղեցու իրավունքները»***(էջ 49, 96): Անհիմն տպավորություն է ստեղծվում, որ Մարզպանական Հայաստանում նախարարական համակարգը պահպանվել է հայ-պարսկական ինչ-որ համաձայնության կամ

պայմանագրի հիման վրա: Այլ կերպ հասկանալ հեղինակի «*պարսից արքան պետք* է...» արտահայտությունը հնարավոր չէ: Վիճարկելի է նաև հեղինակի կողմից պարսից արքայի վերաբերյալ գործածած «*գերակա*» մակդիրը, քանզի իրավական առումով վերջինիս բացարձակ միապետությունն ու տիրապետությունը տարածվում էր Մարզպանական Հայաստանի նկատմամբ նույն չափ, ինչ որ Խորասանի կամ Կրմանի: Այդ բացարձակ իրավունքով էր որ պարսից արքան վերացնում էր Արշակունիների թագավորությունը, պաշտոններից ազատում հայ նախարարներին, կրոնափոխություն պարտադրում, կամ էլ խախտում հայ նախարարական տների գահերեցության կարգը: Այլ բան, որ V-VI դդ. հայկական նախարարական համակարգը բավականին զորեղ էր իր ավանդական դիրքերը պաշտպանելու համար: Բայց դա կատարվում էր ոչ թե իրավունքի, այլ զենքի ուժով:

2. Հեղինակը էջ 17-ում ներկայացնելով 387 թ. պարսից արքունիքի կողմից Արևելահայկական թագավորության տարածքային վերաձևությունները, նշում է, թե նրանից «*անջատվեց նաև Ատրպատականում գտնվող հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքը*»: Հարկ էր տարբերակում դնել հայկական տարածքների և «Ատրպատճաց գավառ»-ի միջև, քանի որ հիշյալ ձեռական իշխանությունը իրավականորեն մշտապես Իրանական տերության, այլ ոչ թե Մեծ Հայքի մաս է կազմել: Բացի այդ, «*բդեշխությունները դուրս էին եկել Արևելահայկական թագավորության կազմից*» արտահայտության փոխարեն ճիշտ կլիներ նշել «բդեշխությունները դուրս էին բերվել Արևելահայկական թագավորության կազմից» (էջ 17):

3. Ատենախոսը միանգամայն իրավացի է, երբ նշում է, որ մարզպանության հաստատությունը Մեծ Հայքի արևելյան մասում սկսել է արմատավորվել Մանվել Մամիկոնյանի խնամակալության օրոք, բայց տասնամյակների ընթացքում ներքին ձևափոխություններ ապրելով, Պարսից արքունիքի վերահսկողական մարմնից 428 թ. վերածվել է Մեծ Հայքի արևելյան մասի վարչական իշխանության (էջ 20): Սակայն այս իսկ տեսանկյունից անհասկանալի է հեղինակի այն միտքը, թե Մանվելի խնամակալության օրոք իշխանությունը տրված էր պարսիկ մարզպան Սուրենին: Հեղինակը բառացի է ընկալել Փավստոսի «Հայոց աշխարհը հանձնեցին Սուրենի Ձեռքը (Փավստոս IV. ԼԸ)» արտահայտությունը, անուշադրության մատնելով այն փաստը, որ նույն Սուրենի միջոցով պարսից արքան թագ էր ուղարկել Արշակ 3-ին և ճանաչել նրա գահակալությունը: Նմանապես անհասկանալի է նաև պարսիկների կողմից Անդրկովկասի 387 թ. «նվաճման» (էջ 20) դրույթը, որը աղբյուրագիտորեն հաստատելի չէ:

4. Ատենախոսը նշում է, որ 5 դ. կեսերից հետո «*Տարածքային առումով Հայոց մարզպանությունը կորուստներ ունեցավ 572 սկսված պարսկա-բյուզանդական հերթական պատերազմի հետևանքով, երբ 591 թ. կնքված հաշտությամբ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց նրանց միջև*» (էջ 47): Այստեղ հեղինակը հակասում է նախորդած իր այն դիտարկմանը, որ դեռևս 571 թ. Սյունիքը դուրս էր հանվել Մարզպանական Հայաստանի կազմից և մտցվել Ատրպատականի շահրմարի մեջ:

5. Գովելի է, որ ատենախոսը նորովի է մեկնաբանում մարզպանության ժամանակաշրջանին վերաբերող այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ***վերակացու, մարզպան, Առանշահիկ, տանուտեր, Տանուտիրական Հայաստան*** և այլն: Բացի միևնույն ժամանակ, հեղինակը անքննադատորեն կրկնում է «Նվարսակի 484 թ. դաշնագիր», «Նվարսակի 484 թ. պայմանագիր» (էջ 52, 53, 125), «***591 թ. Հայաստանի պարսկա-հռոմեական բաժանում***» տարածված, բայց սխալ արտահայտությունները (էջ 47 և ուր.): Առաջինի դեպքում ատենախոսը չի նկատել, որ Պարսից արքայի և նրա ենթակա վարչամիավորի միջև դաշնագիր կամ պայմանագիր չէր կարող կնքվել, իսկ երկրորդ դեպքում չի կարևորվել այն փաստը, որ 591 թ. բաժանվեց ոչ թե բովանդակ Հայաստանի, այլ Մեծ Հայքի արևելյան մասի տարածքը:

6. Բյուզանդական Հայաստանի տարածական ընդգրկման և վարչական կառուցվածքի վերաբերյալ ատենախոսի դիտարկումները ընդանուր առմամբ փաստարկված են և ընդունելի: Սակայն ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը ավելի մեծ ուշադրություն դարձներ հայկական սատրապությունների իրավա-քաղաքական բովանդակությանը և հարցը քներ ֆեդերատների իրավա-քաղաքական հաստատության տեսանկյունից: Քանզի ասել թե «սատրապությունները կայսրության դաշնակիցներն էին», կնշանակի կատարելապես անտեսել նրանց ազատությունների և կայսրության հետ նրանց հարաբերությունների իրավական հիմքերը: Ընդ որում, ցանկալի կլիներ, որ հեղինակը զուգահեռներ տաներ սատրապությունների և կայսրության աֆրիկյան և եվրոպական ֆեդերատների միջև, որից ակնհայտ կդառնար, որ Հուստինիանոս 1-ի կողմից ազատությունների վերացման քաղաքականությունը ուղղված էր ոչ միայն հայկական սատրապությունների դեմ, այլ ֆեդերատների դեմ առհասարակ:

7. Չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ, որ Մարզպանական դարաշրջանի հայկական նախարարական համակարգը պատմական էվոլյուցիայի արդյունք էր: Այդուհանդերձ, անընդունելի է նրա այն միտքը, թե «Նախարարական համակարգը կազմավորվելով Արտաշեսյանների շրջանում՝ ավարտուն տեսք է ստացել Արշակունիների օրոք» (էջ 87): Հեղինակը շրջանցել է Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի հիմնավոր եզրահանգումները Հայաստանում ավատատիրության և նախարարական համակարգի նահապետական արմատների վերաբերյալ և տուրք է տվել խորհրդային պատմագրության կանխակալ կարծիքին: Էջ 91-ում ատենախոսը բացահայտում է նաև իր կարծիքի աղբյուրագիտական հենքը՝ Մ. Խորենացու այն հաղորդումը, թե «***Վաղարշակ թագավորը մեր երկրում սահմանեց նախարարություններ և դրանց համար պիտանի մարդկանց նշանակեց նահապետներ***»: Հարկ էր, որ հեղինակը քննաբար արժևորեր Մ. Խորենացու այս հաղորդումը և ճիշտ նույնականացներ Վաղարշակ թագավորին:

8. Անընդունելի է ատենախոսի այն միտքը, թե «***ժամանակի ընթացքում գործակալական պաշտոնների որոշ նախարարական տների ժառանգական մենաշնորհը դառնալու հետևանքով նրանց տրված ձեռական իշխանությունը դարձել է տոհմական սեփականություն***» (էջ 89): Համենայն դեպս Արշակունիների թագավորության գոյության

շրջանում ձեռական իշխանության կալվածքները նախարարական սեփականություն չեն համարվել, իսկ պարսկական տիրապետության շրջանում էլ այդ փոփոխությունը համընդհանուր բնույթ չի կրել:

9. էջ 95-96-ում հեղինակը «ավագ» և «կրտսեր» նախարարությունների տարբերակման հիմքում դնում է «հզորության» հանգամանքը: Այս դեպքում ցանկալի կլիներ, որ ատենախոսը համեմատություն անցկացներ հայկական և իրանական աստիճանակարգությունների միջև և տարբերակման գործում հավուր պատշաճի կարևորեր նաև ազնվազարմության գործոնը: Այս տեսանկյունից է, որ հասկանալի է դառնում նախարարական տոհմագրությունների վաղեմացման այն մրցավազքը, որն արտացոլված է V դ. հայ մատենագրության մեջ:

10. Որշակի առարկություններ է հարուցել նաև «**Նախարարների հողատիրական իրավունքներն ու տիրույթները**» խորագրով ենթագլուխը: Ավելի քան վիճարկելի են ատենախոսի պատկերացումները հելլենիստական դարաշրջանի Մեծ Հայքի արքայական իշխանության բովանդակության, նրա ծիսական հիմնավորման, ինչպես նաև երկրի հողային ֆոնդի նկատմամբ արքայի իրավունքների վերաբերյալ: Արտաշեսյան Մեծ Հայքում արքան ոչ թե «***պետության ներկայացուցիչն էր***» (էջ 96), այլ պետության մարմնավորումը, իսկ պետության հողային ֆոնդի նկատմամբ նրա իրավունքն էլ ոչ թե «***միայն տնօրինություն էր***»(էջ 97), այլ բացարձակ և գերագույն սեփականատիրություն: Պետք է նկատել նաև, որ Արտաշեսյան արքաները երբեք «***աստո որդիներ***» չեն կոչվել, այլ աստվածային որակով (Բարություն) օժտված տիրակալներ (Արտաշես I) և կենդանի աստվաներ (Տիգրան II, Արտավազդ II):

11. Անընդունելի է նաև ատենախոսի այն թեզը, թե «***Քրիստոնեության ընդունումը սասանեց արքայի մենաշնորհը հողային հարաբերություններում, քանի որ ըստ քրիստոնեական վարդապետության, աստծո որդին մեկն էր՝ Հիսուս Քրիստոսը և այդ գիտակցության հիմքի վրա էլ սկսեց զարգանալ լիակատար ժառանգական սեփականատիրական իրավունքը, իսկ Հայոց արքան՝ արդեն «աստծո ներկայացուցիչը» չէր երկրի վրա և հետզհետո վերածվեց ամենախոշոր հողատերի՝ դառնալով առաջինը հավասարների շարքում***» (էջ 97): Ատենախոսը քաջածանոթ է Փավստոս Բուզանդի Հայոց պատմությանը և պետք է ուշադրություն դարձներ ապստամբ հայ ավագանուն ուղղված Ներսես Մեծի այն խոսքին, թե «**Արշակունիները մեր բնիկ տերերն են, որոնք տրված են մեզ աստծուց**» (Փավստոս Բուզանդ, 4. ԾԱ):

Ամփոփենք: Թող բոլորովին այն կարծիքը չստեղծվի, թե արված դիտողությունները ստվերում են աշխատության արժանիքները: Հենրիկ Խաչատրյանի աշխատությունը արգասիք է մեծ հմտություն ու պատրաստվածություն ունեցող պատմաբանի տքնաջան աշխատանքի: Այն ունի մեթոդականմեծ արժեք, քանզի հայագիտությանն առաջարկում է ուշադրություն դարձնել մի շարք դրույթների վրա և համալիր կերպով

վերաիմաստավորել Հայոց պատմության մի որոշակի շրջափուլ՝ փոձելով այն ուսանելի դարձնել նաև մեր օրերի համար:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ձեռագրի դրույթներին:

Աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Ի նկատի առնելով վերն ասվածը՝ երաշխավորում եմ Մասնագիտական խորհրդի առաջ Հենրիկ Ալբերտի Խաչատրյանին շնորհել հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս

Պատմ. գիտ. Թեկնածու, դոցենտ՝ Ա. Տ. Մելիքյան

Ա. Տ. Մելիքյանի ստորագրությունը հաստատում եմ

ՎՊՀ գիտական քարտուղար Ս. Բեժանյան

18. 05. 2021